



Աստոմին® Բեյբի գել ատամների ծկթման համար

Օգտագործման հրահանգ

✓ Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելը բիոադիեզիվ գել է՝ նախատեսված պերորալ օգտագործման համար: Այն արագ ստեղծում է անտեսանելի շերտ, որը պաշտպանում է լնդերը տհաճ զգացումից և ցավից: Նրա բնական բաղադրիչները օգնում են մեղմացնել ցավն ու կարմրությունը ախտահարված հատվածներում:



✓ Ապլիկատորը ունի սիլիկոնե ելուստներ, որոնք մեղմ մերսում են լնդերը՝ մեղմացնելով տհաճության զգացումը և այն ախտանիշները, որոնցով ուղեկցում է ատամների ծկթման գործընթացը:

✓ Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելը չի պարունակում տեղային անզգայացնողներ, դեղամիջոցներ, սպիրտ և շաքար:

✓ Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելը չի առաջացնում այրոցի զգացում քսելիս և ունի բանանի հանելի համ:

Օգտագործման ձևը

Բավարար քանակությամբ գելը տարածեք ախտահարված ամբողջ հատվածի վրա՝ ապլիկատորի օգնությամբ մեղմ մերսելով լնդերը:

Ցանկալի է գելը օգտագործել ուտելուց հետո և երեխայի քնից առաջ, ինչը կնպաստի շերտի առաջացմանը և կերկարացնի ցավի մեղմացման ազդեցությունը երեխաների մոտ: Օգտագործել ըստ անհրաժեշտության: Յուրաքանչյուր օգտագործումից հետո փակել պտուտակային կափարիչը: Հեռացնել բոլոր մնացորդները, որոնք կարող են խանգարել հաջորդ կիրառման ժամանակ:

Բաղադրությունը

Ջուր, պոլիվինիլպիրոլիդոն (PVP), մալտոդեքստրին, պրոպիլեն գլիկոլ, PEG-40 գերչակի հիդրոգենացված յուղ, Ալոե վերա (Aloe barbadensis), քսանտանային բուսախեժ, բուրավետիչ, կալիումի սորբատ, նատրիումի բենզոատ, ԷԴՏԱ դինատրիումական աղ, նատրիումի հիալուրոնատ, քսիլիտ, ցետիլալիլիդինիումի քլորիդ, գլիցերիլսթինաթթու, շաֆրան (Crocus sativus)

Ուշադրություն

Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելի յուրաքանչյուր պարկուն պետք է կիրառել միայն մեկ հիվանդի համար՝ բացառելու ապլիկատորի և գելի խաչաձև աղտոտումը: Ցանկացած բաղադրիչի նկատմամբ գերզգայունություն ունեցող հիվանդներին հակացուցված է Աստոմին® Բեյբի ատամների ծկթման գելի օգտագործումը:

Նախազգուշացում և նախազգուշական միջոցներ

ՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միայն մեծերը կարող են քսել բժշկական արտադրանքը երեխաներին:


Այս բժշկական արտադրանքը խաղալիք չէ: ԵՐԲԵՔ մի տվեք այն երեխայի ձեռքը: Կա շնչահեղձության վտանգ:

Օգտագործելուց առաջ ստուգել բժշկական արտադրանքի ամբողջականությունը: Գելի օգտագործման ընթացքում համոզվել, որ ապլիկատորի գլխիկի որևէ մասեր պատահաբար իրարից չեն առանձնացել: Եթե ապլիկատորի գլխիկի մասերը իրարից պոկվել են, դադարեցնել օգտագործումը և չփորձել կայցնել պոկված մասը:

Չօգտագործել բժշկական արտադրանքը գելը վերջանալուց հետո:

Չօգտագործել պիտանելիության ժամկետի ավարտից հետո, չօգտագործել նաև եթե պարկուճը վնասված է, և կա արտահոսք: Պահել սենյակային ջերմաստիճանում, ջերմության աղբյուրներից հեռու և չսառեցնել:

Պահել երեխաների համար անհասանելի վայրում



Պարունակություն

10 մլ

Արտադրող

Ալիանս Փարմա Սրլ,
Վիպե Ռեստելի 5,
20124 Միլան, Իտալիա

Տարածող ընկերություն

Բեռլին-Իսեմի ԱԳ (ՄենարինիԳրուպ),
Գլինիքեռ Վեգ 125,
12489 Բեռլին, Գերմանիա

Խմբագրման ամսաթիվ 09.2016